

ՄԵԿ ԲՈՊԵ ՏՐԱՄԱԴՐԵՔ...

Հարաբերությունները Կարևոր են

ԴՈՒՔ ամենակարևոր մարդն էք Ձեր երեխայի կյանքում: Այդ պատճառով՝ Ձեր երեխայի հետ Ձեր ունեցած հարաբերությունը վաղ միջամտության կարևոր կենտրոնակետն է: **Early Start** (Վաղ Սկիզբ) ծառայությունները մշակված են լիազորելու **Ձեզ**, որպեսզի **Դուք** կարողանաք ավելի լավ արձագանքել Ձեր երեխայի յուրահատուկ կարիքներին: Ձեր ծառայության մատակարարները գաղափարներ ու աջակցություն կտրամադրեն, որպեսզի **Դուք** կարողանաք օգնել Ձեր երեխային ձեռք բերել այն հմտությունները, որոնք, **Ձեք** կարծիքով, ամենակարևորն են:

Հասարակական և հուզական զարգացումը բնութագրում է զգացմունքներ ունենալու և արտահայտելու, հարաբերություններ ստեղծելու և աշխարհը բացահայտելու ունակությունը: Հասարակական և հուզական զարգացումը կյանքի ընթացքում մասցած ամբողջ կրթության և զարգացման հիմքն է հանդիսանում: Մա ճշմարիտ է բոլոր երեխաների համար, այդ թվում՝ հաշմանդամություններ և ուշացումներ ունեցողների համար: Աջակցություն ունենալով՝ բոլոր ընտանիքները կարող են օգնել իրենց երեխաներին սովորել ինչպես ընկերներ գտնել, առողջ կերպով ուժեղ հույզեր արտահայտել և հանգիստ լուծել կոնֆլիկտները: Մա հասարակական և հուզական հմտությունների օրինակներն են: Ձեր հարաբերությունները Ձեր երեխայի հետ կարևոր են, քանի որ դրական հարաբերությունները բարելավվում են Ձեր երեխայի ուղեղը: Յուրաքանչյուր օր ցանկացած տեղ դրական ծնող/երեխա փոխազդեցություններն օգնում են ամրացնել Ձեր կապը՝ Ձեր երեխային տալով այն, ինչն իրեն անհրաժեշտ է սովորելու և աճելու համար:

Երբ Ձեր երեխան իրեն զգում է ապահով, անվտանգ, փայփայված ու սիրված, նա աճում:

Մենք հասկանում ենք, որ ծնող լինելը միշտ չէ, որ հեշտ է: Ուշացումներ կամ հաշմանդամություն ունեցող փոքր երեխաների ծնողներին կարող է լրացուցիչ աջակցություն պահանջվել: Վարքը, հաղորդակցությունը և ֆիզիկական խնդիրները կարող են ավելի դժվարացնել ծնողի դերը: Ձեր Early Start թիմն այստեղ է Ձեզ օգնելու համար: Դուք կարող եք ամեն օր ամրացնել Ձեր երեխայի հետ ունեցած կապն ու հարաբերություններն առօրյա գործողությունների ընթացքում: Մենք կօգնեք Ձեզ սովորել, թե ինչպես:

Մեկ րոպե տրամադրեք և խաղացեք, երգեք, կարդացեք և ծիծաղեք Ձեր երեխայի հետ:

Հասարակական և հուզական զարգացման մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիտեք այս տեսագրությունը՝ <http://earlystartneighborhood.ning.com/ssip-resources/TaMvideo>

Դուք և Ձեր երեխան...



Գաղափարներ և խորհուրդներ...

Ինչպե՞ս կարող եք իմանալ, երբ է Ձեր երեխան ուրախ, տխուր, նյարդայնացած, վախեցած կամ գայրացած:

Հետևեք Ձեր երեխային, որպեսզի սկսեք ճանաչել նրա նշանները: Նրանք կարող են օգտագործել մարմնի շարժումներ, դեմքի արտահայտություններ և ձայներ, որպեսզի Ձեզ ցույց տան իրենց զգացումները:

Պատկերացրեք, թե ինչպես է Ձեր երեխան վերապրում տարբեր բաները:

Ինչպե՞ս եք արձագանքում Ձեր երեխայի զգացումներին:

Հաստատեք Ձեր երեխայի զգացումները և կոչեք դրանք պարզ բառերով: Օրինակ. «Ես տեսնում եմ, որ դու նյարդայնանում ես, քանի որ չես կարողանում վերցնել խաղալիքը»:

Եթե Ձեր երեխան ուրախ է, շարունակեք անել այն, ինչ անում եք: Եթե Ձեր երեխան վշտացած է, հանգստացրեք նրան:

Ինչպե՞ս եք օգնում Ձեր մանկանը կամ փոքր երեխային, որ նա սովորի հանդարտվել:

Հիշեք ինքներդ հանգիստ մնալ: Ձեր երեխային հանգստացնելու տարբեր մեթոդներ փորձեք, ինչպես օրինակ՝ գրկեք նրան, ձռձռեք նրան, տվեք նրան հատուկ խաղալիք կամ վերմակ, երգեք կամ հանգստացնող երաժշտություն միացրեք:

Մտացեք զգացումներին արձագանքելու առողջ մեթոդների մասին. խորը շնչեք, հաշվեք մինչև չորսը, պղպջակներ փչեք, երգ երգեք կամ զվարճալի պար պարեք Ձեր երեխայի հետ: Հարցրեք, եթե Ձեր երեխան ուզում է, որ գրկեք իրեն:

Ինչպե՞ս եք քաջալերում Ձեր երեխայի այն վարքը, որը ցանկանում եք տեսնել իրենից:

Ժամանակ տրամադրեք Ձեր երեխայի հետ կապ հաստատելու համար. ժպտացեք, խոսեք և լսեք նրան, կարդացեք, երգեք և խաղացեք նրա հետ, միասին կերեք:

Ավելի հաճախ անջատեք էլեկտրոնային սարքերը, որպեսզի կարողանաք կենտրոնանալ Ձեր երեխայի հետ հարաբերության վրա:

Որևէ մտահոգություններ կամ հարցեր ունե՞ք Ձեր երեխայի վերաբերյալ:

Հիշեք, որ եթե Ձեր երեխան հոգնած է, ծարավ, սոված կամ անհարմար, նա իրեն շատ լավ չի պահելու: Հոգացեք նրա կարիքը, նախքան նոր վարք սովորեցնելը:

Որևէ մտահոգություններ կամ հարցեր ունե՞ք Ձեր երեխայի վերաբերյալ:

Ջրուցեք Ձեր Early Start թիմի հետ: Մենք այստեղ ենք Ձեզ օգնելու համար:

Հիշեք՝...

Դուք Ձեր երեխայի առաջին ուսուցիչն եք: Երեխաները շատ բաներ են սովորում այլ մարդկանց գործողություններից... մասնավորապես Ձեզանից: Դադար տվեք, երբ դժվարանում եք հանգիստ մնալ: Համոզվեք, որ Ձեր երեխան ապահով է, և մի բռնեք հանգստացեք: Կարող եք ասել. «Ինձ ժամանակ է պետք մտածելու, թե ինչպես կարող եմ օգնել քեզ»: Հոգ տարեք Ձեր անձնական հուզական բարեկեցության մասին: Եթե լարված եք, ընկճված կամ անհանգիստ, դա ազդում է Ձեր երեխայի վրա: Մտացեք Ձեզ անհրաժեշտ օգնությունն ու աջակցությունը:



Developed with the support of the California Interagency Coordinating Council (ICC) on Early Intervention and the Early Start Comprehensive System of Personnel Development. Early Start is implemented by the Department of Developmental Services

